ԹԻՒ 322 Դ. ՏԱՐԻ 1890 ՅՈՒՆԻՍ 30 ՇԱԲԱԹ

ԾԱՂԻԿ շաբաթը երկու անգամ կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերն ։ — Տարեկան բաժանորդագրութեան գինն է 100 ղրուշ արծաթ ։ — Վեցամսեայն 50 ։ — Գաւառաց համար 115 ղրուշ ։ — Վեցամսեայ 60 ։ — Ծանուցման տողը 5 ղրուշ ։

ԽՄԲԱԳԻՐ
Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ԾԱՂԻԿ

Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել ։
Առ Արտօնատէր և Տնօրէն
ԱՆՏՈՆ ՍԱՔԱՅԵԱՆ
Լօքի Ջադտէսի Համաճեան Նշան էֆ. Պէրպէրեանի Տպարանն ։
Խմբագրութեան յանձնուած գրութիւնք ետ չեն տրուիր ։

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՆՏՕՆ ՍԱՔԱԵԱՆ

40 ՓԱՐԱ ՀԱՆԴԷՍ ՓԱՐԱ 40

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն (Մեր Վարչութիւնը)— Նոր Ելմտացոյցը.—Սամաթիոյ Եէնիմահալլէ.—Մանկական Պարտէզ.—Վ. եմ. Ցակոբ փաշայ Դատաստանական խորհուրդ.—Վըրիպակ,—Քնալը կղզի—Մայր-եկեղեցւոյ Թաղ. խորհուրդ.—Ասկէ անկէ.—Քաղաքակրթութեան չարիքները.—Այլ և այլք.—Կանանց ժողով.—Վիպասանութիւն՝ Անծանօթ աղջիկը.—Ծանուցմունք

ԱԶԳԱՅԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՄԵՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Մեր Նախորդ Ազգային Տեսութիւնըն համառօտակի կը պարզէր արդի կացութիւնն, որ ընդհանուր դժգոհութիւն պատճառած լինել կը թուի, որր պատասխանատուութիւն կը ծանրանայ մեր Վարչութեան վրայ ։

Ի՞նչ կ'ընէ մեր Վարչութիւնը ։

Կրօնական ժողովն իր հրաժարականը կը կրկնէ, նկատելով թէ իւր պաշտօնավարութեան պայմանաժամը լրացած է, ուստի և կըպատրաստուի իւր համաշատուութիւնը խմբագրել,

Կարի հետաքրքրական է տեսնել թէ արդեօք ի՞նչ պիտի պարունակէ այդ համարատուութիւն՝ մանաւանդ արդի կացութեան հանդէպ ։

Յայտնի է թէ կրօն. ժողովէն շատ բան կ'սպասուի և մեծ բան կ'սպասուի իբրեւ Վարչութիւն Եկեղեցւոյ, բայց թէ ի՞նչ ըրած է ի պաշտպանութիւն շահուց, և կամ ի՞նչ կընէ ու կը խորհի Համագումարը, որ պաշտօն կարծես լրացած է ։

Առոնք այնպիսի հարցումներ են, զորս կը թելադրէ մեզ ընել արդի կացութիւնը ։

Կարգը կուգայ Քաղ. ժողովին, որու համար կ'ըսուի սակայն թէ կազմալուծեալ մարմին մ'է դարձեր ։

Ոմանք կը խորհին թէ պէտ չըլլար եթէ Քաղ ժողովն ալ հրաժարի և Նոր կրօն. ու Քաղ, ժողովներ ընտրուին ։

Ոմանք աւելի բանաւոր կը դատեն անմիջապէս փութացնել այդ ժողովին վերակազմութիւնը՝ մերժելով հրաժարողներու հրաժարականն և հրաւիրել որպէսզի սահմանադրական տարեգլխոյ առթիւ փութայ անմիջապէս Նոր դիւանի ընտրութիւն կատարել ։

Այս կարծիք աւելի ընդհանրացեալ է իբրեւ բանաւոր, գործնական և օրինական, որում մենք նոյնպէս յոժ կուտանք ։

Բազումք եւս, ի նկատ առնլով Ամեն. Ս. Պատրիարքի հիւանդագին վիճակն և այս պատճառաւ Պատրիարքարանէ ստէպ բացակայ լինելու հարկի ներքեւ գտնուիլն, կ'առաջարկեն գէթ Թարմ ոյժերով և փորձառութեամբ օժտեալ խորհրդական մը կարգել, օրինակի համար զՊետր. Իգմիրլեան Սրբազան,

Նաեւ, ամենամեծ մասամբ խիստ պատշաճ և օգտակար կը համարին Ազնուա. Տօքթ. Թիրեաքեան էֆէնտիի ազգասիրական զգացմանը կոչում ընել եա առնլու համար Երեսփոխանութենէ և Ազգ. ժողովոյ Ատենապետութենէ զիւր հրաժարական, զոր. ինչպէս նշանակած ենք, մատուցած էր անցեալ օր, Տօքթ. Թիրեաքեանի, որ յաճախ տուած է իւր անկեղծութեան փորձեր ։

Վերջապէս, այս ամենայն խորհուրդք և մտածութիւնք արգասիք են այն դժգոհութեան, զոր կը պատճառէ արդի կացութիւնը ։

Եւ այս ամենէ բացորոշ կը հետեւի թէ արդի պայմանաց մէջ ո՛րչափ անմխիթարական է մեր ներքին գործոց վիճակը, զորմէ յաճախ կը գըրենք այս սիւնակաց մէջ, կրկնելով և ի վեր հանելով արձագանքն Հասարակաց Կարծեաց ։

Գերագոյն առաքինութիւն է Ազգի և Եկեղեցւոյ ընդհանուր օգտի առջեւ զոհել ամենայն նկատողութիւն անձնական կամ կուսակցական, երբ մանաւանդ իրաց վիճակն անմիջական դարմանի և լուրջ հոգածութեան կը կարօտի ։

ՆՈՐ ԵԼՄՏԱՑՈՅՑԸ

Սահմանադրական երկամեայ նոր շրջանի, այն է, 1890—91 և 91—92 թուականաց Ելմտացոյցը Տնտեսական խորհրդոյ կողմէ լուրջ հոգածութեամբ պատրաստուած է, որ առ. Քաղ. ժողովն պիտի մատուցանէ։

Տեղի ունինք կարծելու թէ Տնտես. խորհուրդն այս նոր Ելմտացոյցի մէջ մուծած է ինչ ինչ խնայողութիւններ. իհարկէ աւելցնելով Այցելու-Հովուաց համար նախապէս սահմանեալ 20,000 ղրուշի վարկն, որ անբաղդատելի կերպիւ նուազ է քան իրական պէտքեն, մանաւանդ թէ այժմ բազում տեղեր առաջնորդաց բացակայութեան պատճառաւ, որ ոչ նուազ ուշադրաւ պարագայ մ'է, այնպէս որ յիշեալ վարկ եթէ 200,000 ի ալ բարձրացուի. ընդհանուր պիտոյից և պահանջմանց նըկատմամբ դարձեալ քիչ է պիտի ըսենք, բայց դժբաղդաբար մեր Պատրիարքարանի ելմտական վիճակը քաջալերական չէ, թէ և նախորդ տարուան ելմտացոյցի մէջ կարգ մ'աւելորդ ծախքեր նշանակուած էին, որ չվրիպեցան մեր քննադատական տեսութիւններէ, բայց վրիպեցան և անշուշտ դարձեալ պիտի վրիպին Ազգ. ժողովոյ նկատողութենէ, այն Ազգ. ժողովոյ կ'ըսենք, որ իր [illegible] վիճակին մէջ հազիւ ժամանակ ունեցաւ նախորդ երկամեայ Ելմտացոյցի վաւերացումը կատարելու ճիշդ այն օրը, յորում կը լրանար նորա գործադրութեան պայմանաժամը։

Ներկայ շրջանի Ելմտացոյցն արդեօք ե՞րբ և ո՞րքան ժամանակէ պիտի վաւերանայ։

Խնդիր մ'է, որոյ յապաղման մասին ներելի չէ մեզ տարակուսիլ, նկատելով որ մեր Ազգ. ժողովն սաստիկ զբաղեալ է յոյժ կենսական խնդրովք, յորս ստէպ առաջին տեղը կը բռնեն—ողբացեալ Ռուբինեանի բացատրութեամբ—անձնական դէպեր, որոյ մէկ պայծառ օրինակն տեսնուեցաւ իր անցեալ նստի մէջ անշուշտ ի մեծ գայթակղութիւն ներկայից և բացակայից։

ՍԱՄԱԹԻՈՅ ԵԷՆԻ-ՄԱՀԱԼԼԷ

Յիշեալ թաղի Ս. Յակոբ եկեղեցւոյ վերաշինութեան համար կազմեալ Պատ. Յանձնաժողովն, որ ընդ. Ատենապետութեամբ Ստամպօլլեան Ազնուա. Բարսեղ էֆէնտիի, անձանձիր ոգւով և եռանդուն անձնուիրութեամբ կաշխատի իւր պաշտօնն յաջողութեամբ կատարելու, մէկ կողմէ զբաղելով վերաշինութեան հոգերով և միւս կողմէ հանգանակութիւն կատարելով։

Հանգանակութեան կը շրջին այժմ Ազնուա. Տեարք Բ. Ստամպօլեան, Գ. Թօփալեան և Պ. Աստառճեան։

Գոհունակութեամբ կ'իմանանք թէ Վսեմ. Ունճեան Մաթէոս և Աբիկ էֆէնտիք ու Ազնուա. Բարսեղ էֆէնտի Ստամպօլլեան 50ական ոսկի նուիրած են ի նպաստ վերաշինութեան։

Ոչ նուազ գոհացուցիչ է տեսնել նաև թէ համայն բարեսէր ազգայինք յօժարակամ կը մասնակցին սոյն հանգանակութեան, խրախուսելով վերաշինութեան Պատ. Յանձնախմբի յարգելի անդամոց ջանքերը։

Ստուգիւ շնորհակալեաց արժանի են Յանձնաժողովոյ անդամք, որ բարոյական զոհողութիւններէ զատ՝ նաև նիւթական զոհողութիւններ ալ կը նըւիրեն յօգուտ յիշեալ աղքատիկ թաղի, որ անշուշտ օրհնութեամբ պիտի յիշէ իւր բարերարները։

Ժամանակ է այլ ևս որ Պոլիս քիչ մ'ալ իւր պէտքերն հոգայ, թողլով որ քիչ շատ կարող գաւառներ ինքնօգնութեամբ մատակարարեն իւրեանց էական պէտքերն՝ առանց այլ ևս բեռ լինելու Պոլսոյ վրայ, որմէ օգնութիւն խնդրելու իրաւունք ունին այն գաւառներ միայն, որ իրաւամբ անկարող են իւրեանց կենսական պէտքերն հայթայթելու։

Յիշեալ եկեղեցւոյ վերաշինութեան ի նպաստ հանգանակութեան ցուցակներն հաճութեամբ պիտի հրատարակենք Ծաղիկի մէջ, երբ Պատ. Յանձնաժողովն հաճի ղրկել նաև առ մեզ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Գոհութեամբ կը հրատարակենք թէ Մայր-եկեղեցւոյ Պատ. Թաղ. խորհրդոյ կրթասէր անդամներէ մի քանին զգալով նոյն ընդարձակ թաղի մէջ Մանկական պարտիզի մը կարևորութիւնը, որոշած են իւրեանց անձնական պատասխանատուութեան ներքև բանալ մի այնպիսի հաստատութիւն, որոյ ծախսը պիտի վերաբերի իւրեանց քսակին, իսկ արդիւնքն Մայր-եկեղեցւոյ սնտուկին։

Առ այժմ չենք գիտեր թէ սոյն օգտակար հաստատութեան բացումն ե՞րբ տեղի պիտի ունենայ, բայց կըրնանք այժմէն ըսել թէ յարմար տուն մը արդէն վարձուած է սոյն նպատակի համար։

Ամենայն յաջողութիւն կը մաղթենք ձեռնարկու ազնիւ ազգայնոց։

ՎՍԵՄ. ՅԱԿՈԲ ՓԱՇԱՅ

Ն. Վսեմութիւն իբր երկու շաբաթէ հետէ իւր ենթակայ եղած հիւանդութենէ բարեբաղդաբար ապաքինելով սկսած է իւր կարևոր պաշտօններու գլուխն անցնիլ, զորս կը վարէ երկար տարիներէ ի վեր արժանեօք և ամենայն յաջողութեամբ։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դատաստանական խորհրդոյ անդամներէն Աճառեան Մեծ. Յակոբ էֆէնտի, որ ասկէ առաջ երկիցս հըրաժարական տուած սակայն չէր ընդունուած, այս անգամ վերստին հըրաժարական տուած է իւր ծանր զբաղմանց պատճառաւ։

Աճառեան էֆէնտի Մայր-եկեղեցւոյ գործօն անդամներէն մին է, որ պահելով իր այս պաշտօնը, զոր յաջողակութեամբ կը վարէ, Դատաստանական խորհրդոյ անդամակցութենէ վերջնապէս հրաժարիլ ստիպուած է։

Մարդէ մը, որ գործի տէր է, ի հարկէ չկրնար տարապայման ծառայութիւն սպասուիլ, մանաւանդ երբ կը բաւականանայ մէկ պաշտօն միայն խղճի մտօք վարել։

ՎՐԻՊԱԿ

Նախորդ թերթի թիւը տպագրական սխալմամբ 231 դրուած է, որ պէտք է լինի 321։

ԲՆԱԼԸԻ ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Կ. Պոլսոյ նախորդ Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Ս. Արքեպիսկոպոս Վեհապետեանի յատուկ կոնդակաւ յանձնարարեալ, Յակոբեան Պաղտասար Եփֆէնտիի ննջեցելոց հոգւոց ի հանգիստ տարեկան Ս. Պատարագը՝ Գեր Տ Հըմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան հանդերձեալ է մատուցանել յառաջիկայ կիւրակէ 1 յուլիս կղզոյս Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։

ի Դիմաց Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Ն. Ս. Անդրէասեան Տ. Ս. Մանուկեան

1890 յունիս 28

Գնալը. Կղզի

ՄԱՅՐ. ԵԿԵՂ. ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴ

Ս. Եկեղեցւոյս Նորոգ կառուցանելի կալուածոց համար, Խասգիւղի աղիւսի ազնուասիրտ գործարանատերաք փափաքելով իրենց առ եկեղեցիս և առ վարժարանս տածած սիրոյն մի հաւատիքը տալ, այս անգամ Աւագապատիւ Տէր Սուքիաս Հօր միջոցաւ նուիրեցին 30,000 հատ աղիւս։ Նոյնպէս մաւունաճի հայազգի եղբարք եւս փոխադրութեան օրինական ծախուց 15 առ հարիւրը սիրայօժար զեղչել յանձն առած են։

Այս առթիւ, Խորհուրդս պարտք կը համարի հետեւեալ նուիրատուութիւնքն եւս յայտ առնել, որք եղած են անցեալ տարի նոյնպէս Աւագապատիւ Տէր Սուքիաս Հօր ձեռամբ ձեռք մը եպիսկոպոսական զգեստ պատրաստելու համար։

Վսեմ. Եղբարք Ունճեան 500 դրուշ, Ազն. Տիկին Վ. Զրաճեան և Ազն. Մագսուտ էֆէնտի Հարէնց 324, Տքթ. Յովսէփ Ալթունեան 108, Ազն. Պատրիկ Էֆէնտի Կիւլպէնկեան 100, Յարութիւն Կիւմիւշկէրտան 95, Յակոբ Աճառեան 80, Ազն. Տիկին Գաբամաճեան յիւսկիւտար 20, Եղիազար Մելիքեան 20, Յակոբոս Նարկիլէճեան 20, Նասիպ Աճէմեան 20, Տիգրան Անուխեան 20, Մանուկ Գաղէպեան 20,

Գումար 1320 ղրշ։

Խորհուրդս իւր խորին շնորհակալիքը կը յայտնէ նուիրատու բարեսէր ազգայնոց, մանաւանդ վերոյիշեալ բազմարդիւն Աւագերեց Տէր Հօր, որ ամէն առթի զօրավիգ հանդիսացած է Խորհրդոյս ջանից ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյս և վարժարանաց։

ի Դիմաց Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Նոսիպ Դարբէշ Պօղոս Էֆէնտի

25 յունիս 1890

ՏՕՔԹՕՐ ԱՐԱՊԵԱՆ

Այս անգամ Փարիզէն վերադարձած ըլլալով ամեն օր ժամը 8—10 կը գտնուի Եէնիքաբու Սարգիս Էֆէնտի Կարապետեանի թիւ 5 դեղարանն, ուր երեքշաբթի օրեր ձրի կը դարմանէ իրեն դիմող ազքատ հիւանդները։

Նաեւ յիշեալ դեղարանը կը գտնուի հեղուկ մը ընդդէմ գլխի թեփերու և կարդիլէ մազերու թափումը։

Այս դեղի օգտակարութիւնը փորձով հաստատուած է։

ԱՍԿԷ ԱՆԿԷ

Կենդանաբանական պարտիզի մը մէջ այրև կին կը շրջագայէին, երկուքն ալ վերջին ծայր տգեղ։

Սրիկայ մ՝որ իրենց մօտէն կանցնէր, կը պոռայ՝։

—Արդեօք կապիկներն ազա՛տ արձակեր են։

Պարոնը բարկութեամբ անոր մօտենալով,

—Թշուառական, այդ բանն ի՞նձ համար ըսիր։

—Ո՛չ։

—Հապա որո՞ւ համար։

—Երկուքնուդ համար։

* * *

Նորատի և սիրուն կին մը կնասէր վաճառականի մը խանութը,

—Այս կերպասին կանգունը քանի՞ է։

—Մէկ համբոյր միայն։

—Բան կանգուն տուէք, մեծ մայրը պիտի վճարէ։

* * *

Տիկ. Ն. . . իւր տան բժիշկին ձանձրացած է որ անվերջանալի սիրաբանութիւն կընէ իրեն։

Անցեալ օր տօքթէօրը դարձեալ կը ներկայանայ։

Տիկինը սպասուհւոյն։

—Ըսէք որ մարդ չեմ ընդունիր այսօր։

—Եթէ պատճառը հարցնէ՝։

—Ըսէք որ անհանգիստ եմ։

* * *

Հարուստ հիւանդ մը հռչակաւոր տօքթէօրի մը կը ներկայանայ և կըսկսի իւր հիւանդութիւնը բացատրել երկար բարակ, բայց բժիշկն ականջ չկախեր և աճապարանօք սրուակ մը հանելով և քթին տանելով,

—Հոտոտեցէք. կըսէ, լաւ, առողջացաք։

Հիւանդը օրն տեսակ բժշկութենէ զարմացած կը հարցնէ անոր

—Որչա՞փ է պարտքս։

—Հազար ֆրանք։

Հիւանդը պաղարիւնութեամբ հազար ֆրանքնոց պանք տոմս մը կը հանէ գրպանէն, անոր քթին կը տանի ըսելով

—Հոտոտեցէ՛ք . . . լաւ վճարուեցաք և մի և նոյն պաղարիւնութեամբ կը մեկնի։

* * *

Արտաշէս և Ներսէս երկու եղբայրներ մի և նոյն անկողինը կը պառկին։

Մայրերնին։

—Արտաշէս, ինչո՞ւ այնպէս անկողնոյն մէջ տեղը կը պառկիս, եղբօրդ ի՞նչ կը ձգես։

—Երկու քովերը։

* * *

Մարդ մը ամբաստանեալ էր փայտի վաճառատան մը մէջ հրձիգութիւն ըրած ըլլալուն։

Դատաւորը.—Ի՞նչ պիտի ըսէք զձեզ արդարացնելու համար։

Ամբաստանեալը,—Միայն սա, տէր դատաւոր, դրան վրայ տախտակ մը դրուած էր, սա բառերով Լաբել էտոյ ես ալ ասիկա ազդարարութիւն մը կարծեցի և ըստ այնմ վարուեցայ։

* * *

Ընտանեկան երեկոյթի մը մէջ։

Պարոն մը կրնակը չըմինէին տուած

սարսափելի կը յօրանջէ։

—Կը ձանձրանա՞ք, պարոն, կը հարցնէ մօտը գտնուող անձ մը։

—Այո՛, պարոն, հապա դո՞ւք։

—Ես ալ. առնենք քալենք ուրեմն։

—Ես չեմ կարող, տանուտէրն եմ։

* * *

Դատարանի մը մէջ։

Նախագահը.—Տեսէք, գէշ մարդոց հետ տեսակցելու վախճանն ի՛նչ է. քան երկու տարեկան էք և տասներորդ անգամ լինելով կը դատապարտուիք։

Ամբաստանեալն—Դէշ մարդոց հետ մի՛.—Բոլոր կեանքս դատարանները դատաւորներու մօտ կանցունեմ.

* * *

Տէր մը իր սպասաւորին։

—Իրաւ աւանակ ես եղեր, բարեկամս։

—Ներեցէք, տէր իմ, սա բանը գիտնալ կուզեմ, աւանակ եմ որովհետեւ ձեր բարեկամն եմ, թէ ձեր բարեկամն եմ, որովհետեւ աւանակ եմ։

* * *

Մայր մը իր տղուն սիրտը կառնէ որ կուլար։

—Նայիմ, զաւակս, ինչու կուլաս, ի՞նչ եղար։

—Մայրիկ (աւելի ուժով կուլայ) երէկ ինկայ և ծունկս ցաւեցաւ։

—Բայց ատիկա երէկ է եղեր, այսօր ինչու կուլաս,

—Անոր համար որ երէկ տունը չէիր։

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԶԱՐԻՔՆԵՐԸ

ՕՐԻՆԱԿ Բ.

(Նախորդ թուէն)

Երկու ազգային պաշտօնական անձանց միջեւ անցեալ շաբթու հետեւեալ խօսակցութիւնը տեղի կունենայ։

Էֆէնտի՛, դուք որ ազգային պաշտօնները ազնուացնելու փափագն և սկզբունքը ունիք, կառաջարկեմ որ դիւանի քուէներու մասին համաձայնութեամբ շարժինք, որպէս զի դիրք ունեցող անձինք քուէ չահին։

—Շա՛տ լաւ, իմ ալ արդէն փափագս այդ է, դուք ո՛րոնց պիտի տաք ձեր քուէները,

—Դուք ո՛րոնց տալ արժան կը դատէք։

Շիտակն ըսելով՝ ես տակաւին ժամանակ ունեցած չեմ խորհելու, ուստի լաւ կըլլայ որ դուք ձեր ընտրելիներուն անունները ըսէք։

—Մի քանի բարեկամք կը խորհին իրենց քուէները տալ Թրրէտինիոն էֆէնտիի, պատգամախօս էֆէնտիի և Ոսպեղէն-Դպրութեան ճաշակի ճաշակաւոր հեղինակ էֆէնտիի, պահելով միւսն արդէն իր տեղը. ինչպէս, կը համաձայնի՞ք դուք ալ։

—Ինչո՞ւ չէ, բայց ազգային հիւանդութեանց դարմանիչը աւելի աղէկ չըլլար փոխանակ Թրէտինիոն էֆէնտիին։

—Ո՞րը, այն՝ որ երեք շրջան արդէն պաշտօն վարած է, ա՞յն կըսէք։

—Ո՛չ, այն վերջնականապէս որոշած է այս անգամ բնաւ չընդունիլ, իմ ըսածս է ազգային հիւանդութեանց ապետ դարմանիչն։

—Բայց դուք չէ՞ք գիտեր թէ մերայինք այդ անունին վրայ չեն համաձայնիր։

—Սակայն ես անոր խօսելու եղանակին, շեշտերուն և բացատրութեանցը սիրահարած և սքանչացողն եղած եմ։

—Այդ լոկ ճաշակի խնդիր է։

—Ի՛նչ ընեմ, գեղեցիկը կը սիրեմ։

—Խիստ բնական է, սակայն ազգային խնդրոց մէջ ոչ թէ ճաշակի՝ այլ սկզբանց միտ դնելու է։

—Այո՛, իրաւունք ունիք, այն որ քաղցրախօս է և շեշտերն ու բացատրութիւնները անոյշ՝ իհարկէ իր սկզբունքներն ալ գեղեցիկ կըլլան։

—Ըսել կուզէք, շլացուցիչ։

—Ցանկուցի՛չ։

—Բայց, բարեկամ, խնդիրը ամուսնութեան վրայ չէ։

—Բանի որ այդպէս է, լաւ ուրեմն, կը զոհեմ իմ կարծիքս և սիրով կը համաձայնիմ։

Մէկմէկէ կը բաժնուին, բայց Ջօպա-Թէփէսի էֆէնտին սկզբունքը դարձեալ իր փափուկ ճաշակին զոհելով իր քուէն ազգային հիւանդութեանց ապետ դարմանիչին կուտայ. ինչպէս իր շնորհիւը կուտան նաեւ անոնք որ մեր Ջօպա-Թէփէսի էֆէնտիի նման խիստ փափուկ ճաշակ ունին։

Այդ ոմանքներ իհարկէ աղէկ կըսեն թէ ամուսնական խնդրոյ համար փափկաճաշակ Ջօպա-Թէփէսիի կարծիքը առնեն, որ յայտ միայն բացորոշ է, իսկ ուրիշ խնդրոց մէջ իր կարծիքներ պարագային, մարդու և տեղւոյ համեմատ փոփոխական են, վասնզի մարդ չկոտրելու գերադանց առաւելութիւնն ունի, և իր սկզբունքը ոմ թէ չհամաձայնի իր փափուկ ճաշակին, կը զոհէ, բայց ճաշակն ո՛չ երբէք։

Արդ, այն ամեն իր և խնդիր որ ճաշակի կը վերաբերի. մարդ կրնայ ապահովապէս մեր Ջօպա-Թէփէսի էֆէնտիին դատողութեանը դիմել, յորում միայն իր այո որոշապէս այո և ոչն որոշապէս ոչ է, թէեւ երբեմն ալ շատ չպնդեր իր կարծիքին վրայ՝ անշուշտ մարդու խաթրը չկոտրելու համար, որ իր մեկհատիկ սիրելի սկզբունքն է, որով մեր Ջօպա-Թէփէսի էֆէնտին նշանաւոր դիւանագէտ մը եղած է քաղաքաքաղաքակրթութեան ասպարէզին վրայ։

Ո՛վ անկեղծութիւն արդ եօք ո՛րչափ կը չարչարուիս ու կը հալածուիս այն բանի երեսէ, որ քաղաքակրթութիւն կը կոչուի, քաղաքակրթութի՛ւն, որմէ առ երեսս զուրկ չհամարուելու համար մարդիկ կը ձեւանան այնպէս, ինչպէս որ չեն իրօք, կը վարուին այնպէս, ինչպէս որ չէ իրենց բուն համոզումը, և կը տեսնուին այնպէս, ինչպէս որ չէ իրենց ներքին մարդը։

Ուստի, շնորհիւ քաղաքակրթութեան անհուն բարեաց, այժմ շատ դըժուար է նշմարել ի մարդ անկեղծութիւն, որ ատեն կը փայլի իր բացակայութեամբ։

(Շարունակելի)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Հռչակաւոր զանգակք.—Մոնմառթրի (Գաղղիա) եկեղեցւոյն նոր շինուած զանգակը 16000 քիլօկրամ կը կշռէ և 70000 ֆրանք արժողութիւն ունի։ Բարիզի մէջ ամենէն մեծ զանգակը Նօթրը Տամի եկեղեցւոյնն է, որ 17170 քիլօկրամ կը կշռէ։ Բայց և այնպէս սոյն զանգակներն բաղդատ-

մամբ ռուսական զանգակներու մեծ բան մը չեն. Քոլցքոի զանգակը 173, 000 քիլոկրամ, և Քրէմլինի ահագին զանգակը 201266 քիլոկրամ կը կշռեն։

* * *

Ամերիկէի ներքսերը.

Անգլիացի միսիոնէրը բնիկ սեւի մը հարցուց թէ «սրը աւելի կը սիրե՞ս, Անգլիացին թէ Գերմանացին։

Բնիկ.—Անգլիացին անշուշտ։

Միսիոնէրը.— Ձեռքերը չփելով. ոհ, շատ լաւ, շատ լաւ, ուրախ եմ։

Բնիկ.—Այո՛, անգլիացին կը սիրեմ աւելի. որովհետեւ անոր միսը գերմանացիէն համով է։

Միսիոնէրը լեղապատառ կը փախի։

* * *

Բանտին տնօրէնը առ նոր բանտարկեալ մը «մեր բանտարկեալներուն հետ միշտ կուզենք լաւ վարուիլ. այսպէս իրենց արտօնութիւն կուտանք հոս արհեստին բանելու։ Ի՞նչ է ձեր արհեստը։

Բանտարկեալ.— Գողութի՛ւն։

* * *

Բռօֆէսէօր մը կէս գիշերին արթննալով կը հարցնէ՝ դուրսը մարդ կայ։

Գողը դուրսէն ո՛չ կը պատասխանէ։

Բռօֆէսէօր. «Ահ սխալած ըլլալու եմ» նորէն կը քնանայ։

* * *

Ա.—Ձեզի երկու մէճիտ պարտք ունէի, հրամեցէք. շնորհակալ եմ.

Բ.—Շնորհակալ եմ, բոլորովին մոռացած էք։

Ա.— ... առաջուընէ ինչո՞ւ չըսիր եղբայր ...

* * *

Տիգրան. Ա՛հ, շատ գեղեցիկ երկիր է Եգիպտոս. բայց սակայն տաք է։ Օր մը, բիրտմիտներուն քով արեգակին ազդեցութեան ներքեւ հաւկիթ խաշեցի։

Յակոբ.—Բէ՛հ, Զանզիպարի նայելով բան մը չէ եղեր, մենք հոն լուսնի լուսով կը խաշէինք հաւկիթներն.

* * *

Լրաբեր առ խմբագրապետ.—Պարոն, ընտիր յօդուած մը ունիմ ձեռքս։

Խմբագրապետ.—Ի՞նչ է այն։

Լրաբեր.—Հինգ ոսկի առնելիքս տուր, և թերթիդ մէջ երեք սիւնակ յօդուած մը պիտի գրեմ սա վերնագրով «ի՞նչ կ'զգայ մարդ երբ նոր զգեստ հագնի»։

* * *

—Վէրոն,—Պու սէնէ նէրէյե կիթ. մէյէ ֆիքրինիզ վար։

Գաթին.—Հապէրիմ եօգ տըր։

Վէրոն.—Ճանըմ հիչ պիր նէթիճէ չըգարամա՞ղմըսըն բէտերինին վէ վալիտէնին լագըրտըլարընտան։

—Գաթին —Վալիտէնին լագըրտըսընա պագարսաք, պիր այ Պէյիւքտէրէյե, իքի հաֆթա Գատը՝ քէյիւնէ, պիր այտա Պէյիւք Ատայա կիտէճէյիզ. բէտերին լագըրտըսընա պագարսագ, անկելանոցա գատար եօլըմըզ վար. կէլ տէ սէն պիր նէթիճէ չըգար պունտան։

* * *

—Հինգ տարեկան Օննիկը, Մայր, միւսիւ Լեւոնը դերձա՛կ է։

Մայր.—Չէ, Օննիկ. ինչո՞ւ հարցուցիր,

Օննիկ.—Երէկ իրիկուն՝ թեւովը Մառիին մէջքը կը չափէր կոր։

* * *

Պատմութեան դասի ատեն.

Դասատուն.— Ըսէ նայիմ, Պարոն Թումիկ, ինչո՞ւ համար 1870 տարին նշանաւոր է։

Թումիկ.—(չուարելով), վասն զի այդ տարին ես աշխարհք եկայ։

ՊԵՏՐԻ

27 յունիս 1390

Գատը՝ գիւղ

ԳՐԻԳՈՐ ԶԱՔԱՐԵԱՆ

ՎԿԱՅԵԱԼ ՓԱՍՏԱԲԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ՝ իւր գրատեղեակը հաստատած է Պոլիս, Պաղչէ Գափու, Համիտիյէ Թիւրպէսիի կից Գազասքէր խան թիւ 6.

Եւ թէ՝ կատանձնէ վարել ամէն կարգի գատեր չափաւոր պայմաններով և խմբագրել թուրքերէն, հայերէն և ֆրանսերէն լեզուներով ամէն տեսակ դատական և վաճառականական գրութիւններ։

Պարզ խորհրդակցութեանց համար փոխարինութիւն չպահանջուիր։

ԿԱՆԱՆՑ ԺՈՂՈՎ

Գանգատներ կը հասնին առ մեզ թէ շարունակելի յօդուածներ երբեմն կը թողունք շարունակելի վիճակի մէջ։

Անկեղծօրէն խօսելով՝ ճշմարիտ են այդ գանգատներ, սակայն մոռացման կամ անհոգութեան վերագրելի պէտք չէ համարուին, այլ այնպիսի պարագաներու, որ երբեմն կը հարկադրեն մեր գրիչն կանգ առնուլ։

Գրիչն անշուշտ քայլել կուզէ և բնաւ երբէք կանգ առնուլ, ստուգիւ խիստ ցաւալի կացութեան մէջ կը գտնուի գրիչն, երբ պարագայք կստիպեն զինք կանգ առնուլ։

Եթէ չէք հաւատար, հարցուցէք Մանզումէի, որ ակամայ կանգ առնլու դժբաղդ հարկին ներքեւ կը գտնուի մի քանի ամսոց մէջ, որ կը թուի թէ դժբաղդութեան ամիսներ են իրեն համար։

Մենք կը փափագինք որ Մանզումէ կանգ առնլու տխուր հարկին ներքեւ բնաւ չգտնուի, վասնզի, ի՛նչ որ ալ ըլլայ ինք և ի՛նչ որ ալ ըսուի իրեն համար, սկզբունքի տէր լրագիր է ու բնաւ չնմանիր Արփիար էֆէնտիի, որուն սկզբունքը սկզբունք չունենալն է։

Անշուշտ դէշ սկզբունք չէ այս, սակայն զարմանալու ինչ կայ, երբ իր ընդունած դաստիարակութեան արդիւնքն է, և երբ մանաւանդ թերթասուութիւնը իր գրչի նշանաբանն է, այլ եւս տեղի չմնար խնդիր ընելու թէ գրիչը սրտին պատկերն չէ. ուստի երբ գրչովը Բարթողականներու կամ Մելքիսեդեանններու դէմ շարժի, սրտովը կը դաշնակցի անոնց հետ ընտրական գործողութիւններ կատարելու, ի հարկէ հասարակ մահկանացուներու տնհասկնալի նուրբ հաշիւներով։

Ուստի, երբ Արփիար էֆէնտի գրիչը Մելիքօ-Բարթողականաց դէմ շարժէ, կրնակն անոնց դարձնէ, վասնզի երեսը սրտին հակասութիւնն է, և կամ, փոխադարձաբար, և ինք բնաւ մեղադրելի չէ, ըստ որում, ինչպէս ըսինք, սկզբունք չունենալն Արփիար էֆէնտիի էեղեցի սկզբունքն է.

Ընթերցողք պիտի ըսեն հիմա թէ Մաղիկ, ըստ իւր խոստման, կանանց ժողովի նկարագրութիւնը պիտի ընէր,

բայց Արփիար էֆէնտիի կենսագրութիւնը կը գրէ, ի՞նչ կը նշանակէ այս։

Բայց միթէ չարժե՞ր մի քանի տող նուիրել Արփիար էֆէնտիի, որ ժամանակիս մեծ մարդն է, ինչպէս որ մեր այս ըսածը կը հաստատեն իւր քաղուածքը, խօսուածքը, շարժումը, գրիչը և մանաւանդ լեզուն, որմէ շատ կախորժին կանայք, ինչպէս կախորժի ինք ալ անոնցմէ, այնպէս որ, Վոսփորէն յԱդրիական իւր ուխտագնացութեան միջոցին Դաւռմինայի մէջ կնոջ բացակայութիւնը նշմարելով՝ զայրացմամբ գոչեց թէ՝ Դաւռմինա քաղաքակրթեալ շոգենաւ չէ, և. հետեւաբար. ուխտեց չճամբորդել այլ եւս այնպիսի շոգենաւով, եթէ գեղեցիկ սեռը անդ իւր ներկայացուցիչը չունենայ, վասն զի, ըստ իւր դաւանութեան՝ կինը ընկերային աշխարհի լոյսն է. և ուր որ կին չկայ, անդ լոյս չկայ։

Արդ ներողութիւնը խնդրելով ազնիւ ընթերցողաց պահ մը մեր նիւթէն շեղելուս համար, կը դառնանք հոն, ուր ժամանակ մը հարկ եղած էր կանգ առնուլ կանանց ժողովի նիստերու դադարման պատճառաւ։

ՆԻՍՏ Զ։

Ատեանը բացուեցաւ Ճերպէզէլի Պիրիճիկ տուտուի ատենապետութեամբը, որ զանգակն հնչեցնելով՝ հետեւեալ պերճախօս ատենաբանութիւնն ըրաւ թրքերէն լեզուաւ.

«Մատամ վէ մատմազէլլէր.

Պու կիւնքի իճթիմաըն սէպէպի մալիւմ։

Պու կիւնէ գատար Բարիզտէ իճատ օլան մօտալարը գապուլ էտտիք, պօնճօռնօ էտտիք, պաշ էյտիք, գա ամա աճապ պիլի՞ըսինիզ, հիչ պիրիմիզ պիր շէյ տէմէտիգ։

(Սօլ թարաֆտան թահսին ալամէթլէրի)։

Մօտա տըր տէյէրէգ պիզի էօյլէ անճանաչ գըյաֆէթլէրէ սօգտուլար քի՝ հաթրըմա կէլտիքճէ՝ ազլըմա ղիյան կէլիյօր.

(Պիր գաչ մատմազէլլէր, տօղրու տըր, հագգըն վար)։

Ա՛խ, գըզգարտաշլար, տէրտիմիզին հա՞նկը պիրինի սէօյլէիմ, պաշըմըն արդա թարաֆընտան տուշէրճէսինէ Պըրիկան իսմինտէ շապկալա՞ր մը կիյտիրմէտիլէր պիզէ։

(Շէյտիտ էլ չըրբմալարը)։

Զամաշրը գուրուտաճագքեարի մալագօֆլար կիյտիրիպ տէ սահան գաբաղը պիչիմինտէ պիզի կէզտիրտիքլէրինի ունութտունո՞ւզ մը։

(Հէր թարաֆտան հիտտէթ ալամէթլէրի)։

Էսկի ըիճալ հաշասը պիչիմինտէ ֆարպալալը ֆիստանլար հաթրըմա կէլտիքճէ ֆէնա սոյ խըրս տուեույօրում։

(Ումում պիր հէյէճան)։

Հաթրընըզա կէլի՞ր մի, գույրուդլու եըլտըզ պիչիմի ուզուն ֆիստանլարը կիյտիրտիլէր տէ պիզէ պիր բարասըզ սօգագլարը սիւբիւրտտիլէր . . , քա ամա տէմէյին, բէք խըրս տուլուլաճագ շէյ տիր։

(Սօլ թարաֆտան պիր սէս, հագգրն վար, տօղրուսու բէգ կիւզէլ սէօյլէյօրսուն)։

Պու կիւնէ գատար պիզ պունլարը հէբսինէ պօնճօրնօմուզ վար տէտիգ, գապուլ էտտիք, ֆագաթ պու սէնէնին եէնի մօտա սիվրի շապկալարընա, քա ճանրմ, նէ՞ տերլէրսէ տէսինլէր, տայանամամ, տահա օնպէշ կիւն եօգ տըր քի իքի լիրա վէրտիմ պիր շապկա եաբտըրտըմ, Պէօյիւկտէրէյ պիր վիզիթամ վար ըտը, հայտէ պիր արապայա օթուրալըմ տա շու վիզիթամը վէրէյիմ տէտիմ, գըզգարտաշլար. ինանըն. նասըլ քի տէտիմ, շապկամ եիւքսէք. արապանըն թավանը ալչագ, եօլտա արապա սալանտըգճա շապկամ թավանա վուրուպ վուրուպ բիտէյէ տէօնտիւ նէ՞, պանատա կիւնահ տէյի՞լ . . . Իշտէ մատամ վէ մատմազէլլէր, նէ՞ օլուրսա օլսուն, միճէրրէտ պունա պիր շարէ տիւշիւնմէլիյիզ։

Պունլարտան մատտա, պիրտէ պու մօտա վէ գարիֆ սայէսինտէ կիւլտամլասը կիպի վէ հէգարիֆէնտ մատմազէլլէրիմիզ էվլէրտէ գալմագտա՝ վէ եահօտ, միճէրրէտ տօլկունճա գրախօմա յըլա անճագ էվլէնէպիլմէքտէ տիրլէր քի, տիգաթը ճալիպ տիր։

Իմտի, մատամ վէ մատմազէլլէր. պէնտէ շու կիպի պէյանը էֆքեար իտէրիմ քի իշպու դրախօմա մատտէսինէ սէպէպիյէթ վէրէն մօտա վէ գարիֆլիգլէրի քեամիլէն իշիմիզտէն գալտըրմայա պիլ իհթիֆագ գարար վէրմէտէն պաշգա չարէմիզ եօգ տըր։

Իշտէ պէնիմ էֆքեարըմ գու օյուպ՝ ումումէն գարարընըզա միւնթազրըմ։

(Շարունակելի)

ԼԱՔԷՍ ՏԱՍԻԻՐԱՆՍ

ՊԷՐԻ ՎԷ ՊԱՀՐԻ ՀԱՐԻՔ ՎԷ ՔԱՋԱՑԱ ԳԱՐՇՈՒ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

Թէէ՛ինաթ աքչէսի 50000000

Ի՛հթիեաթ աքչէսի 300000

Ալթը սէնէի միւթէճավը զ Տէրսաատէթտէ իճրայի մուամէլէ իտ՝ կէլմէքտէ օլան մէզքիւր քումբանիանըն մուամէլաթը ճարիյէնին տահա պիր հիսանի սուրէթլէ ճէրէյանը գըմնընտա պու քէրրէ ումում մէմալիքի օմանիյէ ճէնթալը. Էոնտէի ճիղանէմէ իհալէ իմիլտիկնտէն պատէմա էվլաք վէ էշեա վէ սայիրէ դայէթ միւթէտիլ ֆիյաթ վէ հաֆիալը թէտիյաթ չէրիթլէ տարի մուամէլէ իճրաը վէ գազա վուգույի ապապինտէ թաղմին իտէճէկի թահիւտ իտէր վէ քումբանիայը մէզքիւրը սապը աճէնթալար թարաֆընտան չիմտիյէ տէկին հէր նէ գատար բօլիցա վէրիլմիւ իսկ նիհայէթ 31 կիւնէ գատար լիէճիլ թաստիգ։

Ինչու քումբանեանըն թարա աճէնթալըզընա թալէպ պուլունտուզու թագտիրտէ մէրքէզ իտարէյէ միւրաճաաթլարը թավսիյէ պրնուր։

Ումում Թուրքիա աճէնթասը

Բ. ՇԷՀԻՐԼԷԱՆ

Մէրքէզ իտարէ Ստամպօլ Պահճէ գարու Եօրկիատիս խան Նօմէրօ 1

Մէծ վոճառապոան և գործարանքլոմպայէ և այլ

Նէ՞ՐՈՅ։ Ալաճա համար ԲԷ՝ 16 դէյ է

ՓԷՐԻԷՆՃԷԼԷՐ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕԷՆ

Յ. Թ. ՉԱԽՄԻՃԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոհ հասարակութեան թէ իւր վաճառատան մէջ կը շինուին և կը նորոգուին՝ կոտրած, վնասուած, աւրուած Եւրոպական ամէն տեսակ գործիք. ինչպէս կաղի կամ իւղի լամպաներ. աշտանակներ, անկողնարանք. չիրինկաներ. տուշեր սամավարներ և յախճապակեայ կոտրած որ և է նիւթեր. ըստ ամենայնի, մաքուր վայելուչ և նորէն աւելի հաստատուն։

Նաեւ, սոյն վաճառատան մէջ կը գտնուին, եւրոպական ընտիր լամպա. դեր, աշտանակներ ընտիր տպակի խո. ղովակներ որոց համար հաստատակու թիւնը միշտ կը գանգատի թէ չկան ատ. կլօպներ և ամեն տեսակ պատ. րոյկներ, մէկ խօսքով, լանպայի վե. րաբերեալ ամեն բան ինչպէս նաեւ պանեօ և չինկոյէ լուացարաններ և տուչ ընելու համար պէտք եղած ա. մէն կերպ գործիք։

Գիները յոյժ չափաւոր են. զի մեր գործարանի սկզբունքն է ՃՇԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ ։

***—Փորձով գիտեմք և բնաւ տա- րակոյս չունիմք թէ յիշեալ ճարտա. րարուեստ ազգային.ոյն գործերէն մե. ծապէս գոհ պիտի ըլլան մեր ազգա. յինք և այլ եւս իւրեանց, այս կարգի պէտքերն հոգալու համար սիրայօժար պիտի դիմեն նոյն վաճառատուն և գործարանը, փոխանակ այլ տեղեր յաճախելու, մինչ աս վստահութեան ամէն պայման կ'ընծայէ իւր յաճախոր. դաց ։

Օ՛ն ուրեմն, դիմեցէք անդ և փոր. ձեցէք։

ԼԱՔԷՍ

ՏԱՍԻՒՐԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ ԵՒ ԾՈՎՈՒ

ՀԻՄՆԵԱԼ ՓԱՐԻԶ

Քաբիթա կարանթի 50,000,000 ֆր.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԹՈՒՐՔԻՈՅ

Բ. ՇԷՀԻՐԼԵԱՆ

Կ. Պոլիս Պաղչէ-քաբու Եօրկիատիս խան Նօ. 1

պէս բարեկրութեան սահմանէն դուրս անձ. նուէր լինելու, մինչեւ անհասկնալին, մինչեւ յիմարութեան սահմանն ։

Ցաճախ տեսնուած է որ զգացմանց յոր. դութիւնը անհեղեդութեան սահմանին մօտե. ցած է ։

Այս մարդը Ժան Ռընօ կը կոչուէր ։ բայց Ցէն Իւէօնի նահանգին մէջ աւելի ծայր տղամարդ մակդիրովը ամենուն ծանօթ էր ։

Երբ տանը մէջ մտաւ, գլխարկը ձեռքն ա. ռաւ և յարգանօք ողջունեց Լիւսիլն ։ Ման. կամարդ աղջիկը սեղանը կը պատրաստէր ա. գարակին ամենէն մեծ սրահին մէջ, որովհետեւ գործաւորներն մարդէն վերադառնալու մօտ էին ։

—Ա՛հ, դուք է՞ք, Ժան Ռընօ, բսաւ, գոհ եմ զձեզ տեսնելուս. ութ օրէ ի վեր Սէօյեօ. նէն չէք անցած և մէկ կողմ նետեցի զանա. զան առարկաներու ծրար մը զոր ձեր կնոջ կը յատկացնեմ ։

—Միշտ բարի էք, օրիո՛րդ, իրօք, տասն և երկու օրէ ի վեր զձեզ տեսնելու եկած չեմ։ Պարտաւորեցայ հրացանը պատէն կախել և մանգաղը ձեռքս առնուլ ։ երբ դալարիք կը

ժամադրավայրին ներկայ պիտի գտնուիմ որ վերջինն է . . . վտանգի կ'ենթարկեմ անձս, եթէ մէկը զիս տեսնէ, ճանաչէ . . . Ո՛հ, այս մտածումը կը սոսկացնէ զիս . . . կը կոչէ զիս, պիտի տանիմ իրեն ինչ որ կը խնդրէ ինձմէ. արիութիւն և յոյս ։

Ծրագ մը վառեց և նամակը այրեց, կան. խապատրաստութիւն որ դժբաղդաբար անօ. գուտ եղաւ ,

Աչերը արտասուաթօր էին, զորս խնամօք սրբեց. յետոյ գետնայարկը իջաւ երեկոյեան ճաշին համար իւր հրամանները տալու. և լաւ կազմակերպեալ ագարակի մը զանազան տնօրի. նութիւնները ընելու համար ։

Ռուվընա դաշտէն կը վերադառնար. չոր խօսով բեռնաւորեալ սայլակով մը ։ Մանկա. մարդ օրիորդին սիրալիր ողջոյն մը տուաւ ։ Աղ. ջիկը իսկոյն նշմարեց անոր տխրութիւնը ։

—Ըիրելի Բիէռ.ս, ի՞նչ ունիս, հարցուց ։ Տխո՞ւր ես ։

—Իրաւի՛, օրիորդ, գոհ չեմ, բայց ո՛չ ա. մէն բանէ ։

—Արդեօ՞ք աշխատութիւններն փափաքա. ծիդ պէս չեն ։ Կարծեմ խոտերը արեգակին

ՑՈՎՀ, ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԸՆԿ.

45 Պէօյիւք Միլլէր խան, Գալաթիա 45

Գ. Յարկ, Օտ. Մէջլիսի. Ընդեարաբարան Վերա

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՑՔ

ՊԱՏԻ, ԳՐՊԱՆԻ, ՈՍԿԻԷ, ԱՐԾԱԹԷ

ԵՒ ՆԻՔԷԼԷ

ԳՈՀԱՐԵՂԷՆՔ

Ապարանչաններ, Պռոշներ, Օղերւ Մատանիներ, Մեդալիոններ, Գաւազանիգ բուխներ և այլն։

Այս բոլոր ապրանքները բերուած են Եւրոպայ լաւագոյն գործարաններէն և իրենց ճաշակն, քրանը և ընտրութիւնը կարդարացնեն այն համեմատաբար համեստ գիներ որով ի վաճառ հանուած են։

Փոքրաքանակ և մեծաքանակ վաճառուին

Վաճառատունը յանձն կառնու ամէն տեսակ նորոգումներ, ժամացոյցի և գոհարեղինաց յանձնարարութիւններ։

Կարի մեքենաներ կը նորոգուին յեռամբ ճարտար ժամագործ Զենոբ Մէրճանեանի.

ՄԱՅԷՐ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸՆԸՆ ՐՈՒՊԱ ՄԱՂԱԶԱԼԱԲԸ

ՊԷՅՕՂԼՈՒ ԹՈՒՆԷԼ ԳԱՐՇԸՍԸ
ՍՏԱՄՊՈԼ ՔԷՕՓՐԻԻ ՊԱՇԸ

Պէօյիւք ատամլար, գարբլար, տէլիգանլըլար, գէզլա վէ չօֆուգլար իչիւն հոգը վէ ըսմարլամա էնվայի բուպալար, ֆանէլալար, չէմխիէլէր, էլտիվէնլէր վէզայրիհիւմ վէ զայրիհիւմ։

Հէր օն պէշ կիւնտէ մէվսիմէ մախսուս մօտա մալլար վիւրուտ իտէճէք տիր։

Սաթըլան մալլէրին քեաֆֆէսի պիրինճի վէ տայանագը վէ տիւզկիւն մալլար տը։

Մայէր գումբանեասընընն գախտէսի տայմա «ԷՑԻ ՎԷ ԷՀ ՎԷՆ ՄԱԼ ԱՍԹՄԱԳ» տան իպարէթ պուլունմուշ օլտուղը պիր զիյարէթլէ մալլամըզը թէշրիֆ իտէն բաղալէթլու միւշտէրիլէր կէօրէճէքլէր տիր։

Շիւպէ ԻՍՔԷՆՏԷՐԻՑԷ վէ ԳԱՀԻՐԷ

Շիւպէ ԻԶՄԻՐ վէ ՍԷԼԱՆԻԿ

Հայտէյին պագալըմ ՄԱՅԷՐԻՀ

այս ջերմութեան ներքեւ խիստ շուտ կը չորնան։

—Արդարեւ, օրիո՛րդ, կարելի է ըսել թէ՝ արեգակն մեր աշխատութեան երեք մասը կը կատարէ, բայց ինչպէս գիտէք, ուրիշ բան միտքս կ'զբաղեցնէ. ցաւ կը պատճառէ ինձ...։

—Զը պիտի ըսէ՞ք ինծի զայդ, յարեց յուզեալ ձայնով մը։

Վաղեմի ծառայն խորին կերպով վիշտ զգաց։

Դէպ ի նա երկու քայլ առաւ, շրթանցը վերայ տակաւին այս բառերը յեղյեղելով։

—Եթէ այս երեկոյ պտոյտ մը կատարելու մտադիր էք, արեգակին մայրամուտէն վերջ, հրաժարեցէք այդ պտոյտէն և սենեակնէդ դուրս մի ելնէ՞ք։

Ժաք Մէլիէի յանկարծական երեւումը իւր բերանը գոցել տուաւ։

Հայրն աղջկան վրայ երկար ակնարկ մը ձգեց, աղերսանաց յայտնութիւն մը իբր թէ եղած լինէր, և ապա հեռացաւ խորին հառաչ մ'արձակելով։

—Խեղճ Բիէռ, մտածեց Էլիսիլ, իրօք ծանր վիշտ կզգայ, հօրս խիստ բնաւորութեան ի՞նչպէս պիտի տոկայ։

Դ։

ԳԱՅԼ ՍՊԱՆՆՈՂՆ

Ժամը եօթնեւ կէսին միջոցները, բարձրահասակ մարդ մը, կակուղ թաղէ դլխարկաւ մը և ոտներու խոշոր մուճակներով կապուտակէկ կտաւէ պէ՞ղէն վրայէն որսի հրացան մը կախած մտաւ ի Սէօյեան։

Նոյն տարին ինչպէս ամէն գաշտային մարդոց, նոյնպէս իրեն դէմքն թուխ գոյն մ'առած էր արեգակին ճառագայթից ազդեցութենէն, բայց հակառակ իւր դիմագծերուն խոշորութեան և դէմքին խիստ երեւոյթին, համակրելի էր. քառասնամեայ կ'երեւէր։ Իւր քառակուսի ճակատն, քթին ծայրը հաւաքած յօնքերն, և իւր ակնարկաց մէջ չեմ գիտեր ի՞նչ յանդուգն և հպարտ բան մը կար որք երեռան կը հանէին խիստ բնաւորութիւն մը և գաղափարաց մէջ բաւական մեծ յամառութիւն մը։

Այդ կիսովին վայրենի երեւոյթին ներքեւ, կար սակայն տաք սիրտ մը կարո՞ղ ցուցնելու դիւցազնական արիութիւն մը, կարող վերջա-